Հաշվետվություն
2018 թվականի հունիսի 11- 14-ը ք.Հռոմ (Իտալիայի Հանրապետություն)
գործուղման արդյունքների մասին

1. ***Անունը, Ազգանունը***

Արարատ Միրզոյան

2. ***Զբաղեցրած պաշտոնը***

ՀՀ առաջին փոխվարչապետ

3. ***Գործուղման վայրը և ժամկետները***

Հռոմ (Իտալիայի Հանրապետություն) 2018թ. հունիսի 11-14-ը

4. ***Գործուղման նպատակը (աշխատանքային, որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)***

Ներդրումներ ներգրավելու ուղղությամբ եվրոպաբնակ հայազգի գործարարների հետ հանդիպումներ ունենալու նպատակով:

5. ***Հանդիպումները, քննարկված հարցերը, ձեռք բերված պայմանավորվածությունները***

Հանդիպումներից մեկում «Սարտիս» ընկերության ղեկավար Գագիկ Սարուխանյանի հետ քննարկվել է Հայաստանում թեթև արդյունաբերության, մասնավորապես կարի արտադրության հետագա զարգացման և իտալական նորաձևության հայտնի տների հետ համագործակցության հարցերը, որոնք հնարավորություն կտան լուծելու մարզերում, մասնավորապես Շիրակում, Լոռիում և Սյունիքիում, բնակվող մի քանի հարյուր կանանց զբաղվածության հարցը:

Հաջորդ հանդիպումների ընթացքում «Ֆրանկ Մյուլեր» ընկերության համասեփականատեր Վարդան Սըրմաքեշի հետ քննարկվել է Հայաստանում ջրամբարների կառուցման, քաղաքային շինարարության խթանման (մասնավորապես Հին Երևան նախագծի իրականացման), վերականգնվող էներգետիկայի, այդ թվում նաև աննախադեպ ծավալով արևային էներգիայի արտադրության մեծացման հնարավորությունները:

Խոշոր ներդրումային ընկերությունների ներկայացուցիչների, այդ թվում՝ «Ամբեր Կապիտալ ներդրումային կառավարում» ընկերության համահիմնադիր Ջոզեֆ Ուղուրլյանի հետ հանդիպման ընթացքում քննարկվել է օտարերկրյա ներդրողների համար հայաստանյան բիզնես միջավայրն առավել գրավիչ դարձնելու և ծավալուն ներդրումներ գրավելու հնարավորությունները և կոնկրետ նախագծերը:

Բոլոր հանդիպումների ընթացքում մեր հայրենակիցներին խնդրել եմ արձանագրել ու նաև փոխանցել իրենց միջազգային գործընկերներին, որ Հայաստանում իրապես ազատ և մրցակցային տնտեսության կայացումը, կոռուպցիայի դեմ պայքարն ու դատական համակարգի անկախացումը միանգամայն նոր, շատ նպաստավոր պայմաններ են ստեղծում Հայաստանում լուրջ բիզնես գործունեություն ծավալելու համար:

Գործուղվող՝

Առաջին փոխվարչապետ Ա.Միրզոյան

Ստորագրություն, ամսաթիվ

18.06.2018թ.